ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2508-Ա/Հ «07» դեկտեմբերի 2023 թ.

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԵՐԱԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՉԱՆՑԱԾ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 0-49 ՏՈԿՈՍ ԱՐԴՅՈՒՆՔ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԵՎ ՎԵՐԱԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՉՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 78-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2023 թվականին վերաատեստավորումը չանցած ուսուցիչների ցուցակը, ովքեր, բացառությամբ 50-59 տոկոս արդյունք ցուցաբերած կամ ատեստավորման համեմատ վերաատեստավորման արդյունքում 15 տոկոս աճ ցուցաբերած դեպքի, ազատվում են զբաղեցրած պաշտոնից՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել 2022 թվականի կամավոր ատեստավորման արդյունքում 0-49 տոկոս արդյունք ցուցաբերած և մեկ տարվա ընթացքում առարկայական պարտադիր վերապատրաստման ենթակա ուսուցիչների ցուցակը, ովքեր չեն մասնակցել 2023

թվականի վերատեստավորմանը և ազատվում են զբաղեցրած պաշտոնից՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

ա) Հրամանը ստանալուց հետո ազատել ուսուցիչներին զբաղեցրած պաշտոնից:

12/6/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**